24 նոյեմբերի 2011 թվականի N 1661 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 1011-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ, 30-րդ հոդվածի 2-րդ և 31-րդ հոդվածի 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում արտաժամյա, հանգստյան և տոն օրերի ծառայության, ինչպես նաև հերթապահության ժամանակի համար հավելավճար վճարելու կարգը և չափը սահմանելու մասին» N 1011-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) Բ բաժնի «Տարածքային բաժնի, բաժանմունքների և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի գծային բաժնի՝» այնուակի 2-րդ կետը «տեղամասային ավագ տեսուչ» բառերից առաջ լրացնել «տեղամասային ոստիկանության բաժանմունքի պետ,» բառերով.

2) Գ բաժնի «ՀՀ ոստիկանության, անձնագրային և վիզաների, Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա տարածքային բաժնի, բաժանմունքների և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի գծային բաժնի՝» այնուակը 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. համակարգչային վերլուծության խմբի ավագ տեսուչ».

3) Դ բաժնի՝

ա. «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության՝» սյունակի 1-ին կետը «ներքին անվտանգության վարչությունների» բառերից հետո լրացնել «, օպերատիվ-տեխնիկական բաժնի» բառերով,

բ. «Տրանսպորտային վարչության և ենթակա ստորաբաժանումների՝» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1	2	3	4
	«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի գծային բաժնի «Շիրակ» օդանավակայանի գծային բաժանմունքի՝		12800
	1.	պետ, պետի տեղակալ	
	2.	քրեական հետախուզության՝ ավագ օպերլիազոր, օպերլիազոր	

».

4) Ե բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1	2	3	4
Ե	ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության ծառայողներ		10200
	ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների՝		
	1.	պետի տեղակալներ (կադրերի և անձնակազմի գծով)	
	2.	շտաբի ծառայողներ	
	Հասարակական կարգի ապահովման՝ բաժնի, պրոֆիլակտիկայի, ծառայության բաժանմունքի, խմբի՝		
	1.	պետ, պետի տեղակալ, անչափահասների բաժանմունքի՝ ՀԿՀ ավագ տեսուչ, ավագ տեսուչ, տեսուչ	
	2.	Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի՝ պետի տեղակալ (ծառայության գծով), ավագ տեսուչ, տեսուչ	
	«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի գծային բաժնի, «Շիրակ» օդանավակայանի գծային բաժանմունքի՝		
	1.	ծառայության՝ ավագ տեսուչ, տեսուչ	
	2.	համակարգչային վերլուծության խմբի ոստիկան	
	3.	ծառայության՝ վաշտի, ջոկի ծառայողներ	
	ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակակետային ծառայության ոստիկանության գնդի (բացառությամբ գնդի հերթապահ մասի ծառայողների), մարզային վարչությունների ենթակա տարածքային բաժինների պարեկապահակակետային ծառայության վաշտի, դասակի, ջոկի, Երևան քաղաքի և մարզային վարչությունների ուղեկցող ստորաբաժանումներ (բացառությամբ հերթապահ մասի ծառայողների) ծառայողներ		
	ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության ծառայողներ		
	ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների՝		

	1.	ռազմամոբիլիզացիոն աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության գծով ավագ տեսուչ, հետաքննության բաժանմունքի՝ պետ, ՀԿՀ ավագ տեսուչ, ավագ տեսուչ, տեսուչ, հաշվառման գծով ավագ տեսուչ, թույլտվության համակարգի ավագ տեսուչ, կապի ավագ ինժեներ, ինժեներ, կազմ-վերլուծական բաժանմունքի՝ պետ, ավագ տեսուչ, տեսուչ	

».

5) Զ բաժնի «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության՝» սյունակում «իրավական ապահովման» բառերը փոխարինել «իրավաբանական» բառով, իսկ «ուսումնական կենտրոնի,» բառերը հանել:

2. 2011 թվականի ապրիլի 7-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ-տեխնիկական բաժնի ծառայողների արտաժամյա, հանգստյան և տոն օրերի ծառայության, ինչպես նաև հերթապահության ժամանակի համար հավելավճարները վճարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 12-ի N 1011-Ն որոշման հավելվածի Դ բաժնում նշված չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: